Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 51 — 7 ՀՈԿՏ. 1900 ՇԱԲԱԹ ԹՎԱՍՏՈՆ — Ord. 7. VOL, No. 51

ԲԱԺՆԵԳԻՆ
Մ. ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՄԱՐ
Տարեկան $1.50
Վեցամսեայ 0.85
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան 10 Ֆրանք
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
Խմբագրութեան ղրկուած նամակ կամ ծրար ետ չեն վերադարձուիր։
ԳԻՆ 3 ՍԷՆԹ։

ԶԱՅՆ Հայրենեաց

ԶԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ
AN ARMENIAN WEEKLY.
27 Beach St., BOSTON
ՀԱՍՑԷ
AMERICAN HAI PUBLISHING Co
8 Bennet Street,
BOSTON, MASS.
Entered at the Post Office at Boston, as Second - Class Mail Matter.
Subscription $1.50 a Year.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թէև անցեալ շաբթուն Զայն Հայրենեացը ժամանակին թղթատան յանձնուեցաւ, սակայն թղթատան մէկ պաշտօնէին անմեկնելի զանցառութիւնովն թերթը ժամանակին ղրկուած չէր. ուստի ամէն տեղ ուշ ստացուեր է։ Այդ զանցառութեան պատճառը կը փնտռուի Փոսթ Մասթրին հետ բանակցելով։ Ինչ է. այդպիսի զանցառութիւն մը յուսանք ալ եւս չկրկնուիր։

Ուշադրութիւն մեր տեղափոխութեան և նոր հասցէին։

Ցոդուած, թղթակցութիւն և դրամ ղրկել հետեւեալ հասցէով միայն։

AMERICAN HAI PUB. CO.
8 BENNET ST., BOSTON, MASS.

ԿՐՕՆԱԿԱՆ ԽՆԴՐՈՑ ՎՐՍՑ ԽՕՍԻՆՔ ԹԷ ՈՉ

Ինչպէս ըսած ենք, մեր մէջ կան մեծ թուով ազգասէր երիտասարդներ որոնք չեն սիրեր լսել կրօնական խնդիրներու վրայով, որովհետև կրօնականներու ներկայացուցած կրօնքէն ազգին չարիք շատ հասեր է մինչ բարիքը աննշան կը համարուի։ Միթէ չխօսելով կը վերնայ չարիքը. վերքը ծածկելով կը բուժուի՞, պատուհանները փակ պահելով ներսը լոյս կուգա՞յ, չէ՞ որ բարին լոյսը չարին վրայ ճառագայթելով է որ վերջինը կը հալածուի տեղի տալով առաջինին։

Թուտնչանները աւելի ճարտասան են. անով խօսինք ուրեմն։ Ամերիկայի Հայութիւնը տարեկան 6000 տոլարէն աւելի դրամ կուտայ իր տեղական կրօնական պէտքերուն համար. մինչդեռ ատոր ո՞ր մասն է որ կը տրուի ուղղակի ազգային կենսական ու բազմազան նպատակներու։ Թէ երկրին մէջ և թէ երկրէն դուրս մեր ազգային կենսունակութեան մեծագոյն մասը դարերէ ի վեր անցերէ և այժմ ալ կանցնի կրօնական խոցոլակներու մէջէն. ատոնք անտես առնել, կամ կտրուիլ անոնց մէ՝ կը նշանակէ թողուլ որ ազգային ուժերու հոսումին մեծ մասը պարապ տեղը անցնի երթայ։

Նայեցէք մեր վանական ու եկեղեցական կալուածներուն և եկամուտներուն. ազգը ի՛նչ դրական օգուտ քաղած է անոնց մէ քանի դարերէ ի վեր։ Առնենք Երուսաղէմի վանքը, թո՛ղ անոր կալուածային ու դանդան հսկայ եկամուտները. չեմ յիշեր ո՞ր օրերէն ի վեր՝ ամբողջ ազգը. օրորոցի երեխէն սկսելով, տարեկան ԽԱՐԱՃ կը վճարէ անոր։ Դեռ վերջերս էր որ Երուսաղէմի վանքը իր Եգիպտոսի կալուածները 120,000 աւլարի ծախեց, ու այդ ահագին գումարն ալ գնաց այդ վանքին ունայնութեան որովայնին մէջ ունայնանալ իր կարգին, ըստ Վեհ. Հայրապետի բացատրութեան։ «Խսիր կարտողներու» փորերը քիչ մ՚ալ պիտի մեծնան։ Ու այդ վանքին ճակատը բարձրաստիճան ու ժողովրդական եկեղեցականի մը խօսքը խարակուած կը կենայ—«Միթէ խաչի պատուկէն լաթի կը-տոր կելլէ՞. հարցուցած եկեղեցականդ Երուսաղէմի միաբաններէն է, ալ ի՞նչ կրնաս սպասել անկէ»։ Ու ո՞ր վանքը, ո՞ր եկեղեցական կալուածն ու եկամուտներն կրնան ազգին մխիթարական հաշիւ մը տալ. հաշիւ մը՝ որ Վիէննայի կամ Վենետիկի վանուց հաշիւին առջև ամօթահար չշիկնի։ Մխիթարեան միաբանութեանց վրայ կուչտ մը նայելէդ վերջը աչքերդ դէպի Երուսաղէմի վանքը յառէ. ի՞նչ մխիթարական կետ կրնաս գտնել անոր հին ու նոր պատմութեանը մէջ. ազգը իր կենսունակութենէն զատեր թափած է անոր ծոցը. ի՞նչ ընդունած է փոխադարձ։ Ու այդ գեաները պիտի հոսին այդ առուներէն. անոնք չեն դադրիր, անոնցմով ազգային յառաջդիմութեան դաշտը ոռոգելուն ճարը գըտնելու է. ու այդ ճարը կը գտնենք կրօնական խնդրոց միջամտելով։

Իմաստութիւնը իրականութիւնը ճանչնալ և անկէ օգտուիլ դիտնալուն մէջն է։ Քանի որ կրօնքը մեր ազգին մէջ ամենէն մեծ տեղը բռնած է ու կը բռնէ [illegible] է բարիքն ալ՝ ազգին համար։ Ուստի ճշմարիտ ու իմաստուն հայրենասէրներ պէտք չէ որ անտարբեր կենան այդ մեծ իրականութեան հադէպ. ընդ հակառակն ջանք ու ճիք խնայելու չէ կրօնական հոսանքին շինիչ և օգտաւէտ ուղղութիւն տալու։ Կրօնականներու պարսաւելի և կամ անգիտակ ընթացքէն քէն ընել և թողուլ որ ժողովուրդին իր կըրօնին տուած ուժին ահագին հոսանքը ընդդէմ գայ իր իսկական շահերուն և կազմէ յորձանք ու փորձանք ամբողջ ազգին՝ այդ լքումը ներելի չէ որև է պարտաճանաչ և կրօվի հայրենասիրի։

ԹՈԼՍԹՈՅ ԵՒ ՊՐԷՍԲԻ

Իտալիոյ Թագաւորին սպանումը ժամանակակից խորհողներու ուշադրութիւնը անգամ մը ալ դարձուց Եւրոպայի տիրող գերդաստաններու և հպատակ ժողովուրդներու վրայ։

Զանազան թեր ու դէմ կարծիքներու և խորհրդակցութեանց մէջ ուշադրութեան արժանի է կոմս Լէօ Թոլսթոյի տեսութիւնը որ պարզած է Ինտիփէնտէնթ Շաբաթաթերթի վերջի թուով։ Ընթերցողներուն թերեւս անծանօթ չէ այն իրողութիւնը թէ անիշխանութիւնը գէթ իր վերացական մասը Ռուսներու կը պարտի, Միքայէլ Պաքունին Անիշխանութեան հայրը կը համարուի, ներկայիս Անիշխանութեան գիտական վարդապետը և քարոզիչը կը սեպուի ուրիշ Ռուս մը, Իշխան Քրոփոթքին։ Թոլսթոյի միտքը ընդունակ է ուրեմն շատ լաւ դատելու գործ մը որ արդիւնք է իր արիւնը կրող մարդոց քարոզութեան։

Հակառակ աշխարհաքաղաքացիական հակումներու, ազգի մը անհատները իրարու շատ մօտ հակումներ, գաղափարներ ունին որ տարբեր նկարագիրներ կարելի կընեն տարբեր երկիրներու մէջ։ Թոլսթոն նոյն խիզախ ու ապստամբ ոգին ունի, նոյն ազատական ձգտումները. եթէ իր այդ զգացումներուն այնքան ուժգին արտայայտութիւն չի տար, պատճառը ոչ թէ սրտին տկարութիւնը՝ այլ ուղեղին զօրութիւնն է։ Դարերով աշխարհի վատթարագոյն բռնակալութեան տակ ճնշուող ժողովուրդի մը համար բնական է որ ծնի ապստամբ ու անսանձ հոգիներ, գաղափարի և գործի ոչնչականներ, սակայն ժողովուրդի մը փրկութիւնը չեն կրնար գործել հեղեղի պէս աւերում, հրաբուխի պէս համաշխարհային հրդեհ ձգող հոգիներ։ Ուժանակէն բարեկարգութիւն չծնիր։ Ժողովուրդի մը յոյսը իր արտադրած մեծ հոգիներն են որ սրտի և մտքի մեծութեան տիպարներ կը ներկայացնեն, խօսքով և օրինակով ազգի մը բարոյական և իմացական բարձրութեան չափը կը ցուցնեն։ Ռուսիոյ Մեծ ծերունին է Թոլսթոն՝ պարզ և անփառասէր մարդը՝ որ բանի տեղ չդներ իր միջազգային համբաւը, ինքզինք գաղափարի մը հետ նոյնացուցած, ճշմարտութեան պէս աննուաճ ու անվեհեր կը շարունակէ իր անվհատ պայքարը ամենէն բռնակալ Զարին դէմ եւ Ռուսաստանի [illegible] բանտ, ոչ աքսոր, [illegible] համարձակի իրեն օգնութեան կանչել, Զարը Թոլսթոէն կը վախնայ։

Զայն-Հայրենեացի սիւնակները շատ նեղ կուգան Թոլսթոյի ամբողջ յօդուածը բովանդակելու, ջանանք համառօտ ամփոփումը տալ։

Թոլսթոյի կարծիքով արքայասպանութիւնը երբէք զարմանալի դէպք մը չէ, ներկայ քաղաքակրթութեան մէջ մարդասպանութիւնը ոճիր չէ, թագաւորներ, իշխաններ իրենց պաշտօն առած են մարդ սպաններու համար բանակներ կազմակերպել, թնթանօթներ, հրացաններ պատրաստել, ամենէն մահացու տեսակէն. բարի Ումպերթօն իր մարդասպաններու ձեռքով հազարներով մարդոց արիւնը թափեր էր, ուրեմն երբ ինքը իր կարգին ուրիշ մարդասպանի մը զոհ կերթայ, ի՞նչ կայ զարմանալու։ Ռուս իմաստասէրը սպանութիւնը ամէն պարագայի տակ ոճիր կը համարի, ոճրագործ էր Պրիսքին կըսէ, բայց դատաւորները միշտ նկատի կառնեն մեղմացուցիչ պարագաները. բարի էր Ումպերթօն կըսեն, բայց ի՞նչ մեղք գործած էին Հապէշ զինուորները որոնք սպանել կուտար Իտալիոյ Թագաւորը, ինչ մեղք ունին այսօր Զինացիները. Պրէսքի տգէտ էր, յուզման, կատաղութեան և թերեւս խելագարութեան արդիւնք էր իր ոճիրը, բայց ի՞նչ կըսէք այն ոճիրներուն որ ամիսներով կը պատրաստուին, կը ծրագրուին, և կը գործադրուին։ Ո՞վ է մեծագոյն մարդասպանը։

Գալով արքայասպանութեան հետեւանքին վրայ, Թոլսթոյ իրաւամբ յիմարական կը գտնէ անձ մը սպաննելով երկիր մը բարեկարգելու ջանքը։ Ոչ թէ անձերը, այլ դրութիւնը փոխելու է. քանի կենդանի է ներկայ դրութիւնը, հոգ չէ թէ ով է դրութեան ժամանակաւոր ներկայացուցիչը, իրաց վիճակը անփոփոխ կը մնայ։ Ժողովուրդի թշուառութեան պատճառը անհատներ չեն, այլ ընկերութեան այն դրութիւնը որ շատերը կամ ընդհանուրը կենթարկէ անձի մը կամ քանի մը անձերու իշխանութեան։ Մարդ մը ով ալ որ լինի, երբ ինքզինք միլիոններու տէր կը տնէ՝ իր անբնական դիրքէն շլացած կը կորսնցնէ իր մտքին հաւասարակշռութիւնը։ Ինքնակալութեամբ կը վարուի։

Նկատելի է նաև՝ կըսէ հեղինակը, որ այս մարդիկը ազատուց ի վեր ուրիշ զբաղում չունին այլ եթէ զեղխութեամբ ապրիլ, շողոքորդութեամբ սնանիլ, իրենց ամբողջ կրթութիւնը կը կայանայ մարդասպանութեան արհեստը ուսանելու մէջ,

Ադէքսանդր, Ուիլհէլմ, Ումպերթօ և Նիքօլա չեն բռնութեան և պատերազմի պատճառները, այլ անոնք որ ասոնց իշխանութիւն տուած են և կը պաշտպանեն անոնց դիրքը, հարկ չկայ ուրեմն Ումպերթօն ու Նիքօլան սպաննել, գադրինք պաշտպանելէ այն ընկերական դրութիւնը որուն արդիւնքն են ասոնք, կըսէ Թոլսթոյ, ուրիշ տեղ մը կրկին իրական յանցաւորը կը գտնէ։ «Ժողովուրդի անձնասիրութիւնը որ կը ծախէ իր ազատութիւնը և պատիւը նիթական աննշան առաւելութեանց համար, ահա սարկայ գրաւակը՝ [illegible] կը կըսէ Թոլսթոյ, այդ վիճակը աւելի կերկարէ, ուրեմն չսպաննենք Ադէքսանդրները, Բարնօները, Հումպերթները, այլ ցուցնենք իրենց թէ իրենք մարդասպան են, և ամենէն աւելի թոյլ չտանք որ մարդ սպաննեն, սպաննութեան հրամաններու թող մարդ չհնազանդի...։

Հիանալով հանդերձ Թոլսթոյի մտքի բարձրութեան վրայ, պիտի խնդրէինք որ թագաւորներու մէջ գոնէ մէկ բացառութիւն մը ընելու չմոռնար։

ՎԵՐՔՆՏԵՆՔ ՄԱՔԻՆԼԻՆ

Վերջապէս որոշ ու նշանակելի քաղաքականութեան մը հետեւելու, և մեր Ազգային արժանապատուութեան հետ մեր քաղաքացիական փոքրիկ ուժը համեստ ցոյցով մը Ամերիկեան ազգին ճանչցուցնելու համար. մենք Հայերս պարտինք փութկոտ գտնուիլ, քանի որ նախագահական ընտրութեանց օրերը կը համրուին։

Թէեւ մենք բաղդամամբ փոքր՝ բայց մեր անհատական շահերուն մէջ հաւասար այլոց և թերեւս աւելի մեծ, մենք ալ պարտինք ուրիշ ազգերու պէս մեզի օգտակար քաղաքականութեան մը հետեւիլ։ Քաղաքական ներկայ կացութիւնը աչքի առջև ունենալով կրնանք որոշակի ըսել թէ, հեթանոս ազգաց մէջ թուրքին բնաջնջող քաղաքականութիւնը բացառութիւն մը չը պիտի ըլլայ...։ Այդ բիրտ սարրն ալ օր մը քաղաքակիրթ ազգերու կաղապարին մէջ իր ձեւը ու գոյնը պիտի փոխէ... ։ու այս ամէնէն զատ... մասնաւորապէս անքթիթ աչքերով հսկելու ենք Ամերիկեան ազգին քաղաքականութեան վրայ, որն որ մեր և նոյն իսկ իր ժողովուրդին գրէթէ կէսին կամքէն անկախ ու ստիպուած է հետեւիլ արտաքին քաղաքականութեան...։ Ապագայն գուշակել դիւրին է... երբ ներ-

կայն լաւ կը հասկնանք։։։ Քիչ մը աւելի քաղաքականութիւն պիտի նշանակէ քիչ մ'աւելի պատերազմ ճշմարտին ու օգտակարին համար, իրաւունքին համար, ու բռնութեան դէմ։։։։ Ուստի հոգ չէ թէ ի՞նչ ալ ըլլան Ամերիկեան ազգային ներքին սահմանադրական օրէնք։։։ Ամերիկան ազգը յանուն և ի սէր քաղաքակրթութեան և ազատութեան, երբէք ազատ չի պիտի ըլլայ օժանդակելու կամաւ կամ ակամայ այն բոլոր շարժմանց, որոնք կը սկսին օտար պետութիւններու ձեռքով։։։ Ուրեմն Ամերիկեան ազգին ապագայն այն է որ, այս ազատասէր ժողովուրդը արտաքին քաղաքականութեան մը պիտի հետեւի վերջնականապէս ու երբէք չը պիտի խնայէ իր դրամը, ուժը, կեանքը ևն· միմիայն պաշտպանելու համար իր արտաքին շահերը, քաղաքացիները և օժանդակելու զրկեալին և բռնաբարեալին ևն։։

Մենք Հայերս ալ այս ամէնը հասկընալէ ետք է որ մեր փոքրիկ ուժովը օժանդակելու ենք ասանկ քաղաքակա նութեան մը հետեւող կուսակցութեան։։։ Ես կը խորհիմ թէ մեզի համար անվիճելի ճշմարտութիւն մը պիտի ըլլայ միանգամ ընդ միշտ միացուցնել մեր ձայնը հասարակապետականներու ձայնին։։։ ու բոլոր սրտով բաղձանք մը· Մաքինլիի վերընտրութեան։ Հոս տեղը չէ ամէն մանր մունր խնդիրներու վրայ վիճաբանելու, որոնք ներքին են, բայց ինչ որ մեզ պարտի շահագրգռուիլ, այն է թէ եթէ ռամկավարական կառավարութիւն մը ստանձնէ երկրին քաղաքականութեան դէկը, այն ատէն այս երկիրը իր արտաքին քաղաքական յարաբերութիւնները պիտի խղէ ամէն կերպով, ոչինչ պիտի կրնանք ակնկալել Ամերիկեան ազգին բարեացակամութենէն, ու մանաւանդ մեր Ամերիկեան Հայ քաղաքացիները պիտի չը կրնան պաշտպանութիւն վայելել, երբ ի Թուրքիա։

Այս մեր նշանակելի աջակցութիւնը երբ կուտանք հասարակապետական կուսակցութեան անձայն կերպով և առանց ցոյցի, ես կը նկատեմ թէ, ասիկայ նոյնչափ վտանգաւոր և անօգուտ պիտի ըլլայ, եթէ մենք ռամկավարականաց կողմն ըլլայինք· Լուրեմն միանանք, ու արտաքին ցոյցով մը համակրութիւն մը շա-[illegible] ազգային մասնախումբէն ստացած նամակներս, կը հաստատեն թէ Հայերը երբէք մոռցուած չեն անոնց մտքին մէջ, և թէ Հայոց մէջ կան անհաւասար մտքի ու կամքի տէր խելացի մարդիկ, որոնք այս խնդիրը ձեռք պիտի առնեն իրենց եզած տեղերուն մէջ։

Խօսքս վերջացնելով կառաջարկեմ որ Հայ Ամերիկեան քաղաքացիները իրենք կազմակերպուին, ու քաղաքացիական թուղթեր առնելու օժանդակեն ամէն անոնց որոնց որ պէտք է ու խնդիրը փութով յառաջ տանին, յօդուտ ազգին և իրենց անհատապէս· մենք ալ ամենայն Հայոց մասնախումբ մը կազմակերպենք։

ԱՐՏԱՇԷՍ Ց· ԲԻՕԼԻԵԱՆ

ԱՆԲԱՂԴ ՄԱՐՕԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Հազարից մինը)

—o—

Այդպէս էր անուանում Նա ինքն իրան· «անբաղդ Մարօ» և այնքան սովորական եղանակով, որ և ոչ իսկ կզգային, էր սակայն գեղեցիկ, վայելուչ և յաճախ ժպտալից· տեսնելով կը մտածէին մենք մեզի, թէ ինչու Նա իրան այդպէս կանուանէր, այդքան չնորհալի և միանգամայն սիրուն կնիկ մը մինթէ՞ անբաղդ կը լինէր։

Դեռ շատ նորատի, հազիւ 18 տարիներ բոլորած երկարահասակ, թխագոյն և օձ աչքերով, գրաւիչ և թարմ դէմքով, աղուոր կին մը էր։ Նա առժամապէս կենում մեր տան, և ուր նոյնպէս ապրում էր, բնականաբար մասնակցելով տնային աշխատութիւնների։ Լաւ աշխատող էր և չի նայած որպէս պիտի տեսնենք նրա չարքաշ, արտում և տառապալից կեանքին միշտ քաջառողջ էր և թարմ։ Երախայ մը ունէր որ դեռ տարեկան չի կար, և որ միշտ նոյնպէս գըրեթէ անբաժան մօր գրկից, նրա պէս սիրուն, կայտառ էր սև աչք ու ընքուերով։

Որբևայրի կը լինէր, զի լսել էինք որ նոյն խակ քաղաքացի երիտասարդներին շատերն էին նրա ձեռք խնդրել և մերժուած ստացել, ասում էին որ նա ուխտել է երբէք չի պսակուիլ։ Մեր հարևաններից շատերն նոյնպէս, նրան տեսնելիս յարգանքով և ինչ որ փապկանկատութեամբ էին վերաբերում միայն երբեմն առանձինն և իրարի փսփսալով «բիձն էլ տե՛ս ինչ սիրուն է» ասում էին։ Ինչու է՞ր «բիձ» և թէ ինչո՞ւ այնքան խորհրդաւոր կերպով էին վարուում առհասարակ նրա հետ։ — չատ չը գիտէինք։ «Չը պէտք է խեղճի դարտը խառնել» կասէին ամեն ատեն և ամենքը։

—Այո՛, Մարօն շատ փափուկ սիրտ ունէր իրա հսկայ կազմուածքին տակ, արցունք և տրտմութիւն· նրա ըստ երեւոյթին ուրախ և անհոգ դէմքին վրայ։ Ես շատ անգամներ նշմարել եմ մեր տանը աշխատելիս, երբ մինակ էր մնում և ոչ ոք քովը, աշխատութիւնը շարունակելով, երախան ծնկին քնած, աչքերը նրա երեսին սևեռած ողբաձայն երգում և լալիս էր։ Նրա երգը շատ քիչ անգամ հայերէն էր, որպէս գեղջկուհի քաջ ծանօթ քրթերէնի, նա երգում էր քրդերէն և քրդական մելամաղձոտ ողբաձայներով, ինչ որ բնականաբար մենք հասկանալ չէինք կարողանում։ Արտասուքը կլուլ կլուլ լիք այտերից թաւագլոր տղուն երեսին կը թափէին, այնքան առատ որ Նրա փոքրիկ թխլիկ դէմք թրջում, լուանում էին, և ապա հանելով թաշկինակը լալից յորդացած խլինքը սրբում և գործին շարունակում։

Եւ ես որ քրոջս հետ գազանի կը դիտէի զինք չէինք համարձակում Նրա վիշտը խռովելու և տխրագին հեռանում էինք և մայրիկին պատմում։

— Սեւ կապածը՛, ասում էր մայրս, Նա չիլայ, ո՞վ լայ ապա, Նրա քաշածը Աստուած տուշմանիս ցոյց չի տայ։։ Եւ այսքանը։

Որքան հետաքրքիր էինք սակայն հասկնալու և անհամբեր, բայց այնքան կը սիրէինք զինք որ չէինք համարձակում իրա անբաղդութեան պատճառը իրանից հարցնել։ Չը լրնի իր ցաւեր քրքրէնք, թողէք որ Նրա սիրտ հովանայ։—։

Եւ այսպէս կանցնէր երկար օրեր մինչ մեր հետաքրքրութիւնն էլ օրից օր աճում և շատանում էր։

Մ·Ս·

(Շարունակելի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՈՒՐՄԻ 1900 Յուլիս 2 ին

Օրվան խնդիրն է հացահատիկների թանգութիւնը· հակառակ այս տարուայ առատ բերքերին հետզհետէ բարձրանում է հացի գինը· հասարակ ժողովուրդը սաստիկ նեղվում է, մանաւանդ թիւրք արհեստաւորներն ու ծառայողները, որոնք սովորութիւն չունին, աւելի ճիշտն ասած, կարողութիւն չունին տարեկան պաշար դնելու, այլ օրական ապրուստ ունին· բաղարից ու փուռից գնելով։

Իսկապէս թանգութիւն մը չէ այս, ապա ցորենատէր հարուստների սարքած արհեստական մի սղութիւնը է։ Որովհետեւ անցեալ ամսի 22 ին նման շտեսնուած կարկուտ տեղայ ու մի քանի գիւղերին վնաս հասուց, նորա պատճառաւ էլ հացի գինը բարձրացուցին։ Թէպէտև քառորդ ժամի չափ հաւկիթի մեծութեամբ կարկուտ տեղաց տեղս, բայց հացահատիկներին այնքան չվնասեց, միայն տեղացած վայրերի ծառաստուղները բոլորովին փճացուց· այն էլ եթէ համեմատութեան դնենք անցեալ տարուց նուազ բերքի հետ՝ խիստ աննշան վնաս պիտի գտնենք։ Ասում են շատեր, եթէ վնասուած էլ լինէին ցորենները, որոնց մեծ մասը հասուն ու կիսի չափ հնձուել էին։ Աղախան Միրփանչի ամբարները կարող էին մինչև մի տարի Ուրմիի ժողովուրդին հաց տալ· ո՞ւր կը մնայ ևս մնացած ամբարները, թէ և այս չափազանցութիւն է ժողովրդեան բերանում, բայց իսկապէս էլ շատ առատ բերք ունի այս տարի Ատրպատական աշխարհ ու իւր շրջակայքը։

Մարաղայից լուր է եկել· իբր թէ այն տեղերում շատ մը անասունների էլ է փնասեր կարկուտ· հետևաբար չորացած խաղողի գինը պիտի բարձրանայ որովհետև սաղչայի առատ կեդրոնը Մարաղայ է, ուստի ամէն տարի հազարաւոր բեռներով արտասահման է անցկացուում հայ վաճառականը, որպիսի առ ու ծախսից էլ հազարաւոր ընտանիքներ են ապրում· համարեայ թէ Թաւրիզաբնակ ժողովրդեան մեծ մասն այս առ և տուրով է պարապվում, ահա երկնային մի հարուած էլ հայ ժողովրդեան կարեւոր մի դարին։

Թաւրիզի և Ատրպատականի Հայհուեաց Ընկերութիւնների գաւառումս բացած ուսումնարանների տարեկան քննութիւնները կատարվեցին բաւական յաջող մանաւանդ Դիզա-Թաքէիէը· Թրքախօս ժողովրդեան մասաղերամ գաւառկները Ռուսա-Հայոց մաքուր արտասանութեամբ սկսել են խօսիլ, գրել սա կարդալ ի մըխիթարութիւն ծնողաց և յուրախութիւն բարերարաց։ Ամէն բերան օրհնում է պատճառ եղողներին։ Բայց այս վարժարանները դեռ քիչ են սոյն գաւառի հայոց կարոտից փրկելու համար։ Ինչպէս լսել ենք· Հայուհեաց Ընկերութիւնները մտադիր են յաջորդ տարի բազմապատկել այս գաւառի ուսումնարանների թիւը, բայց եթէ իրենց նիւթականը ներէ։ Այս երկու ընկերութիւնների եռանդուն ու բարի նախանձ ջանքերը խիստ գովելի են· այս տողեր գրողը ի հոգի ուրախանում է տեսնելով ընկերութեանց ջանքերը՝ ազգային մեծ պարտականութիւն է համարում լրագրութեանց միջոցով կարող դասակարգի ազգայնոց ուշադրութիւնը հրաւիրել մեզուական ընկերութիւնների անձնուէր գործառնութեանց վրայ, ընկերութիւնների՝ որոնք իրենց սեռին յատուկ եղած մայրական գթութեամբ խնամեցին ու դեռ խնամում են գործելու անընդունակ գաղթականներին։ Ինչպէս իմ բոլոր յօդուածներից յայտնվում է, որ ես եղել եմ միշտ հոռետես, առանց կուսակցական նկատումների· սարսաւն չէմ կարող ճըշ-[illegible] ազգային ընկերութիւնների մասին որոնք միակ մխիթարութիւնն են Ատրպատականի հայ ժողովրդեան· ուրեմն թող ամէն բարեսէրը չը խնայէ իւր նուիրական օգնութիւնը Ատրպատական աշխարհի մութ անկիւններում լուսաւորութիւն տարածող ընկերութիւններին, թող վստահ լինին ամեն հարուստներ ու նուիրատուներ, որ իրենց իսկական ձեռքերովը հիմնած ուսումնարանների չեն կարող իրենք այնքան աշխատիլ և օգուտ ընծայել ազգին, որքան այս ընկերութիւնները։ Սոքա ընդունակ են ամէն կատակարարների կամքն ճշտութեամբ կատարել։ Ինչ երկու տարի է սր քննական աչքով դիտում եմ սոցա գործերը, եւ ինձ ու ինձ իւր եմ կապում հայ կնիկների ունեցած ուժեղ կամքի ու բարեգործութիւնների վրայ։ Թող ներեն ինձ յիշեալ ազնիւ ընկերութիւնները, որ մի փոքրիկ գիտողութիւն անեմ այստեղ· որովհետև իբրև մարդ— էն էլ կին մարդ առանց պակասութեան չեն կարող լինել։ Ինչո՞ւ ասում եմ «էն էլ կին մարդ»։— նորա համար, որ այս պակասութեան զորեղ մասն իգական սեռին է տրուել։ Ասել եմ ուզում թէ նախա՞նձը, օ՛հ։ այս պակասութիւնը երբեմն աշխարհի շինութեան պատճառն է դառնում և երբեմն աւերելու։ Այս ներելի պակասութեան փոքր ինչ գերի են դառել մեր ազնուափայլ ընկերութեանց անդամուհիները։ Ես՝ մը յառաջ տանելու համար միայն մի անդամուհին բաւական ազմուկ հանեց մի և նոյն ընկերութեան մէջ։։։։ Տէրը հոգին լոյսին արժանի անէ· ինչպէս լսում ենք։ մեռել է յիշեալ անդամուհին· բայց խնդիր է թէ «ես»ի խընդիրը մեռա՞ւ նաև իր հետ։— չեմ կարծում։ Այս փոքրիկ ես բաւական վնասեց Թաւրիզի ընկերութեան բարոյական և ուսումնական շահերը։ Քաջայոյս եմ թէ յիշեալ ընկերութեան ներկայ նախագահուհին (Տիկին Ամատունին) իւր բընական յատուկ ձիրքերով պիտի կարենայ մոռացնել տալ հասարակութեան այս անցած տգեղութիւնը իւր հեռատես ու վարչական հանճարով· և ինչպէս իմ համեստ կարծիքն է, եթէ յիշեալ ազնիւ տիկինը չը լինէր նախագահը, գուցէ և ընկերութիւնը կորսնցնէր իւր գոյութիւնը։

Ն·ԵՐ·

Նուարք Ծրզի

Տեղւոյս հայերը հազիւ 13 հոգիէ կը բաղկանան։ Ասոնք ցարդ որևէ կազմակերպութիւն ունեցած չեն։ Իմ հոս գալուս [illegible] տպէ։ Զանազի հայրեն։ Նակիցներուս զգացումները քրքրելով գտնել թէ ինչ բանի փափաք ունին։ Ծանօթանալով Պ· Յովակիմ Տօնապետեանի հետ, տեսայ թէ ազնիւ զգաւրմանց տէր մի զգայուն և գիտակից երիտասարդ է երբեմն ուսուցչութեամբ պարապած Տիգրանակերտի մէջ։ Այս պարոնը որ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՑԵԼԻ ՈՒ ՆԵՐԿԱՑԻ ՏԷՈՒՐ ՑԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սմիւռնա 1900 Յունիս 18ին·

(Շարունակութիւն նախորդ թուէդ)

Այս դժոխային ճգնաժամերն անցուցինք շնորհիւ ազնիւ հիւպատոսին։ Այժմ Գօթուառուին ենք, որ տեղն էլ զերծ մնացած չէր քրդական արշաւանքներից, որոյ Հայ բնակիչներն առ ահի Խոյ քաղաքն էին գաղթել։ Այն օր էլ քիւրդերու հարկի ներքև գացինք՝ հակառակ մի քանի ժամ առաջ ունեցած ուրախութիւններու (երբ տակաւին նոր էինք ոտք դրել Պարս'ական հողի վրայ) այժմ նորից սուգ, նորից մտատնջութիւն տիրեց մեզ ամենուս։ Քիւրտերը պատրաստուել էին հէնց նոյն գիշերը մեզ պլսկելու, որովհետև հիւպատոսը բերդումն էր հիւր եղել Գօթուումի դատաւորին— իսկ մենք զուտ քրդաբնակ գիւղում, Պարսկաստանի օրէնքներից անտեղեակ գոլով՝ զգուշանում էինք պարսիկի տունը ոտք դնել, որովհետեւ տաճկաստանում այնպէս էին պատմել մեզ· որից խնդրեցինք՝ յանձն չառին հիւպատոսին դնալու և գիշերուան համար պահապաններ խնդրելու, բարեբախտաբար հիւպատոս ինքը իւր ծառաներից մին ուղարկելով մեր որպիսութիւնն իմանալ էր բարեհաճեր· բոլորի դէմքերից հեռացաւ տրտմութիւնը· կրկին ուրախութեան նշոյլը փայլեց մեզանում, վերջապէս դեռ արեգակը չը մտած, պահանջուած հրացանաւոր պարսիկ պահապանները հասան, կարաւանի ուրախութեան չափն անցաւ, ամէն բերան օրհնում էր բարերար Խանին։

Այն գիշերը բաւական հանդիստ անցուցինք· հետևեալ առաւօտ ճանապարհ իեկանք դէպի Խոյ· երիտասարդները մոռացած ամէն նեղութիւններին՝ ուրախ զուարթ կայտառում էին, երգում ու պարում, կարծես բովանդակ աշխարհը տրուել էր իրենց· շարաճճիները այժմ ազատուած լինելով զիրենք տառապող արհաւիրքներից՝ անպատմելի հանաքներ էին անում միմեանց հետ· երբեմն էլ խնդրում էին ծերունի տէր Հօրից որ երգէր· Տէր Հայրը երգում էր հրաշալի ու գորեղ ձայնով՝ ուրախ երիտասարդների սրտերը չը կոտրելու համար· բայց թշուառականները (ինչպէս վերջերս խոստովանում են) Տէր-Տէրի նստած պոլատիշու պոչի տակ փուշեր էին տեղաւորում, որոյ համար խեղճ կենդանին վեր վեր թռչկոտում ու խանգարում էր Տէր Հօր անուշիկ մեղեդին։ Ինչպէս մենք նոյնպէս և միամիտ տէր Հայրը չէր հասկանում թէ տղերք անհանգիստ անելով իրեն գուարճանում էին՝ հոհոցներ արձակելով։ Այս տեղերում մեր կարաւանն աւելի անկանոն և անուզղայ ընթացք ունեցաւ· մերթ թեթևակի կռիւների ենթարկուելով, մասնաւորապէս խստապահանջ ձիապանների հետ, որոնք վանից մինչև Խոյ՝ ինչպէս ասում են՝ արիւն

միշտ փափաքած էր Նուարքի Հայոց մէջ օգտաւէտ կազմակերպութիւն մը ունենալ, այս անգամ 9 հոգի Պ. Թերզեանի տան մէջ ի մի գալով ընկերութիւն մը կազմուեցաւ «Հայ Պանդուխտաց» անուամբ։

Այս ընկերութեան առաջին նպատակն է գրադարակ մը հաստատել։ Պ. Հ. Տօնապետեան և Պ. Բիւզանդ Մանուկեան յանձն առին փափաքողներուն անգլիերէնի դասեր տալ շաբաթը մի անգամ։ Շաբաթը մի օր հրապարակային ժողով պիտի ունենանք ազգօգուտ նիւթերու վրայ ատենախօսութիւն լսելու։

Ընկերութեան Վարչութեան անդամ ընտրուեցան Տիւրք Յովակիմ Տօնապետեան, Մկրտիչ Գալուստեան, և Աղաճան Թէրզեան։

Հ. Մ. Շահինեան

ԲՈՂՈՔ

Իմանալով որ 16 ամիսներէ ի վեր Վանի սովելոց Նպաստի հասոյթին $133,50 ը մինչեւ ցարդ իր նպատակին գործածուած չէ և այնպէս կերևայ որ դրամը մէջտեղ ալ չկայ, կը բողոքեմ յանուն արդարութեան և կը պահանջեմ նոյն ժամանակուան յանձնախումբէն որպէս զի բացատրութիւն տայ կամ իր հաւաքած տեղեկութիւնները հաղորդէ ժողովուրդին հրապարակաւ, եթէ չսիրեր որ ընդհանրութեան բողոքին ներքև ստիպեալ հրապարակ գայ, թերևս նա կրնայ անմեղ ըլլալ և ուրիշ մը մեղաւոր։ ստկայն ամէն պարագայի տակ ժողովուրդը իրաւունք ունի գեղծումներու դէմ բողոքել և գեղծումդործողները ճանչնալ և պատժել ըլլայ ան, աստ մը կամ մարմին մը։

Կը յուսամ որ ձայնս ամէն տեղ լսելի պիտի ըլլայ, որուն ապահովութեանը համար Ամերիկայի երկու թերթերուն ալ ղրկած եմ մի և նոյն գրութիւնս։

Գրիգոր Ատանեան

24 Սեպտ. 1900

Փրովիտենս

---

17 Սեպտ. 1900 Լօրէնս Մաս.

Ամսոյս 15 ին Լովելի մէջ Պ. Պետրոս Գալուստեանի պակադրութեան միջոցին, ըստ սովորութեան ի նպաստ հայ որբերի հանգանակութիւն կատարուելով հաւաքուած 10 ոսկիները այսօր թիւ 69154 մընի օրտրրով ուղարկեցինք Կ. Պոլիս Պատ. Ամեն. Օրմանեանին։

Այդ դումարը հանգանակուած է հետեւեալներէն.

Պ. Պետրոս Գալուստեան $3. Պ. Ոսկեան $. Կարապետեան $2. Պ. Կարապետ Տատեան $1. Հաճի պէյ $. Մկրտիչեան $1. Մանուկ Գալուստեան $1. Ցարութիւն Մարանեան $1. Ա. Վ. Ե. Վ. $1.

Սոյն հանգանակութեան մասնակցողներին հրապարակաւ շնորհակալութիւս յայտնելով՝

Մնամ Ձոթարար

Արսէն Վ. Ե. Վեհունի

ՀՐԱՒԷՐ

ԱՌ ԱՄԵՐԻԿԱԲՆԱԿ ԱԶԳԱՑԻՆՍ

Հայրենակիցներ՝

Ամերիկայի Հնչակեան Մասնաճիւղերու ԺԳ. Գ. Պատգամաւորական ժողովը (որ տեղի ունեցաւ վերջերս ի Փրովիտէնս), Ձեր խնամոտ ուշադրութեան կը յանձնէ հետեւեալ որոշումը զոր միաձայնութեամբ քուէարկեց իր չորրորդ նստին մէջ։—

«Նկատելով որ Հայրենիքի շատ մը նահանգներուն մէջ տիրող սովը, հազարաւոր որբերու անխնամ վիճակը և վերջապէս ազգին ընդհանուր տառապեալ կացութիւնը յատուկ պարտաւորութիւններ կը դնեն իւրաքանչիւր Հայու վրայ մասնաւորապէս Արտասահմանի Հայութեան որ իր վայելած նպաստաւոր պայմաններուն շնորհիւ կրնայ մեծ դեր մը կատարել մեր թշուառ Հայրենեաց վիշտերը ամոքելու համար։

Նկատելով միանգամայն ազգին ոյժերուն ներկայ պառակտեալ վիճակը հանդէպ իրաց այս տխուր կացութեան՝

Պատգ. ժողովս կորոշէ Ամերիկայի մէջ Ազգ. Հայրենասիրական Համաժողով մը կազմել, ուր հրաւիրուին ներկայ ըլլալ Յեղափոխական կազմակերպութիւններու ինչպէս նաև չեղոք հայրենասէրներու ներկայացուցիչները, հետեւեալ գլխաւոր նպատակներով։

Ա. Ամէն դասակարգի ազգասէր հայոց մէջ, զգացումներու և կարծեաց փոխանակութեան միջոց մը ըլլալ յօգուտ ազգային փրկութեան գործին։

Բ. Ազգին ոյժերուն միացման արգելք հանդիսացող խոչնդոտներու բարձման վրայ մտածելով առ այդ գործնական միջոցներու դիմէ։

* * *

Ասով Ամերիկեան Հայ Գաղութը կը հրաւիրուի Ազգային համաժողով մը կազմել Նոյեմբերի 3 և 4 դ. օրերը Ուստը քաղաքի Սբ. Փրկիչ եկեղեցւոյ ժողովասրահին մէջ։

Համաժողովին նպատակը թէև համառօտիւ պարզուած է բանաձևին մէջ բայց ժողովը ազատ պիտի ըլլայ բարեփոխումներ կամ յաւելումներ ընել օրակարգին վրայ։ Պատգամաւորական ժողովին գլխաւոր փափաքը եղած է որ ազգին ներկայ ճգնաժամին մէջ առաջարկուած այս գումարու մը իրապէս համաժողով անուան արժանի հանգամանք ունենայ։— Ինչ որ կարելի է միայն կազմակերպեալ մարմիններու և ընդհանուր ժողովուրդին կողմէ ցոյց տրուելիք անկեղծ և գործօն համակրութեամբը։

Այս նպատակին հասնելու համար Պատգամաւորական ժողովը ոչ միայն կը թելադրէ, այլ ջերմապէս կը յանձնարարէ որ ամէն կազմակերպեալ մարմին ներկայացուի համաժողովին մէջ, որոց իւրաքանչիւրին կողմէ նշանակուած Պատուիրակներուն թիւը հինգէն աւելի չըլլայ։ Ցեղոյ ժողովուրդին Ոչ կուսակցական մասը ամէն քաղաքի մէջ մասնաւոր ժողով գումարելով նոյն նպատակին համար ընդրէ Պատուիրակներ որոց թիւը, իւրաքանչիւր քաղաքի համար երեքէն աւելի չըլլայ։

Աւելորդ է ըսել թէ Համաժողովը զուտ Ազգային գումարում մը պիտի ըլլայ, ուստի յարանուանական խտրութիւնները բացարձակապէս ոչ է նշանակութիւն չեն կրնար ունենալ Պատուիրակներու ընտրութեան մէջ։ Կը խնդրուի որ այս մասին եղած բոլոր կարգադրութիւնները որչափ կարելի է փութով հաղորդուին Նահ. Վարչութեանս, որ այս պարագային կը ծառայէ իբր կարգադիր մասնախումբ։ Կարգադրութեանց տեղեկագրութիւնը ինչպէս համաժողովին բացման ժամը պիտի հրատարակուի յարմար ժամանակին տեղական թերթերու միջոցաւ ի գիտութիւն հանրութեան։ Համաժողովը ինք պիտի կազմէ իւ դիւանը, և նիստերը ընդհանրապէս բաց պիտի ըլլան ժողովուրդին, ի բաց առեալ երբ Պատուիրակները որոշեն մասնաւոր նիստեր ունենալ դռնփակ։

Վստահ ըլլալով թէ Ամերիկայի Հայութիւնը գործնականապէս պիտի պատասխանէ սոյն հրաւէրին, որով Հայ Ազգին մէջ ընդհանուր համերաշխութեան դարեշրջան մը պիտի բացուի։

Մնամք Ցարգանօք

Ի Դիմաց Հնչ. Ազգ. Յեղ. Կուսակցութեան Ամերիկայի Մասնաճիւղերու ԺԳ. Պատգ. ժողովին։

ՆՈՒՀԱՆԳԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

3 Սեպտ. 1900

Ց. Գ. Նկատելով թէ երկրին հեռաւոր մասերուն մէջ բնակող գաղութները յատուկ Պատուիրակներ ղրկելու մասին դժուարութիւններ կրնան ունենալ կը թելադրուի որ այդպիսի գաղութներ իրենց փոխանորդ պարուիրակներ նշանակեն յարմարագոյն վայրերէն։

(Նոյն)

Հասցէ 260 Փ. Օ. Պօքս

Լօրէնս Մաս.

Չօր. Օսման փաշան Պոլսէն փախած և Հոկտ. 3 ին Մարսէյլ հասած է։ Օսման փաշայի փախուստին պատճառ տուած է Սուլթանին առած այն կասկածը թէ յիշեալը Սուլթանին կեանքին դէմ նիւթուած դաւադրութեան մը մասնակից եղեր է։ Նա ալ եկած է Մահմուտ փաշային միանալու։

ՉԻՆԱՍՏԱՆ

— Չինաստանի ծանօթ խնդիրներուն վրայ բան մը չգրելն լաւագոյն կը համարենք. զի որոշ ոչինչ կայ գրելիք։ Չինական ներկայ խնդիրներուն մէջ Եւրոպական պետութեանց ըստանձնած դերը յար և նման է ճիշտ այն դիւանագիտական թատերախաղին, որ Հայկական խնդրոյ առթիւ տեղի կունենար Կ. Պոլսոյ մէջ։ Եւրոպական համաձայնութեան անհամաձայն խաղն է որ կը կրկնուի։ Եւրոպական պետութիւններէ ոմանք իրենց զօրքերը Փեքինէ դուրս հանելու քաղաքականութիւն մը գծած են. ուրիշները նորանոր զօրագունդեր կը ղրկեն դէպի հոն։ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը որոշեց ու իր բանակը Փեքինէն մեկնելու հրամանը տուաւ. հոն պահելով միայն պահակագունդ մը։

Մթութիւն, կեղծիք, խաղ. ահա ներկան։ Ապագայի մասին կարծիք յայտնելը մարգարեներու անկ է։

M. HARPOOTLIAN,

P. O. Box 470, Worcester, Mass

ՍԵՂԱՆԱՒՈՐ ՓՈՒՆ. ԳՐՈՑ

Տաճկաստանի բոլոր քաղաքներն դրամ կը փոխադրենք։ Մեր տան կեդրոնատեղիք են Կ. Պոլիս ու Խարբերդ մեծ. Ցարութիւն Ֆ. Խարբութլեան և եղբարք մեծ գումարով փոխ գիր առնողներուն մասնաւոր զեղչ կընենք։ Ամէն գծի վրայ նաւային տոմսակ կուտանք. տոմսակ ու դրամ հեռագրով կը ղրկենք Մարսէյլ։

Մեր խանութին հասցէն է

57 Hanover Street.

Միհրան Խարբութլեան

Ուստր

թքնելու չափ նեղութիւններ տուին մեզ սակայն մի քանի թակոցից յետոյ կակղացան և ձիապանները մի քանի ժամ հագիւ անցել էր որ Գօթուռից հեռացել էինք, քրդական արհաւիրքներից ազատած, այժմ էլ ենթարկուեցանք դըժոխային ճանապարհների. կատարեալ «Մաղէ Կամուրջների» վրայէն անցնելու դժբախտութիւններին, այս բաւական չէր ահա երկինքն էլ բաց արաց իւր սահանքներ և սկսեց կատարեալ ջրհեղեղ, բաւական էր ձիու ոտք փոքր ինչ սահէր կամ անդնդախոր ձորից անցնող գետի կողմը հակէր, այլ ևս մեծ կոր ականջներն պիտի մնար, ով կարող էր ձիու վրայ կենալ. իւրաքանչիւր ձիուն երկու պահապանով անցկացնում էինք։ Վերջապէս մի ձի զոհ տալով (հիւպասին էր վերաբերում) հաղիւ կարացինք պրծնել ղարապտոյտ կապաններից, ու երկու օրից թրջուած թռչունների նման Խոյ Քաղաք մտանք դիւղերից մի և կէս ժամ անցած։ Այս պարագաներում զուարճացընում էր մեզ «Աղվաչ Սիմոնը» որը Վանից պատահմամբ ընկերացել էր կարավանին. պատահած դէպքերն այլ ևս սովորական դարձան մեզ, զուարճախօսն նեղութիւններ էինք կրում։

Վեցն օր էր որ հայերի երես չէինք տեսեր, բնական էր որ Խոյում հայերի թաղում փափաքէինք իջևան ունենալ և տեղացող անձրևներից ու ցրտից ազատուել։ Հակառակ ձիապանների ընդդիմութիւններին մենք կոպեկներ նուիրելով յաջողեցանք մի ժամաչափ բուն քաղաքից և պանդոկներից հեռաւորութիւն ունեցող հայոց թաղը գնալու։ Զիտպանների առաջնորդութեամբ հասանք Մահտեսի Սարդարենց տան առջևը, որը քաղաքի հայոց ամենից հարուստ կարծուածն ու ճոխ դերդաստանն էր։ Փոքրիկ երախաները դողում ու լաց էին լինում իսկ մենք ոտքից ցգլուխ ջուր էինք կտրել. ինչպէս ասում են Վանեցիք՝ բոլորովին «Տուղ-մուղ» վիճակում։ Երեք եկեղեցականներն աւելի վստահ հայ հարուստի հիւրասիրութեան վրայ՝ ձիերից վար իջել և ուզում էին Վանայ սովորութեան համաձայն առանց արտօնութիւն խնդրելու ներս մտնել՝ ահա աղաներից մինը կատաղած՝ թէ յարբած յարձակուեց ներսից վրաներս անլուր հայհոյանքներով։ Տակաւին առաջին հարուածն էր այս, որ Պարսկա-Հայի ազնուական դասակարգի մի պարոնը հասուց մեր ըեկբեկուած սրտին, առաջին անգամն էր որ պատահում էինք Հայաստանի հիւրասիրութեան հակառակ տմարդի մի գերդաստանի. բնական էր որ մեր ականջները պիտի խլանային ու աչքերնիս արտասուքներով լցուէին։ Ի զուր ծերունի Հայր Սուրբը հասկացնել էր ջանում աղային՝ որ մենք մուրացիկներ չէինք. Վանից եկած և հայի չինութեան ներքև մնալու փափաքողներ էինք, առանց ոչ ինչ պահանջելու։ Ետ դառնալ անկարելի էր, իսկ թուրքի տան հիւր լինելն պարսկական օրինաց հակառակ, որովհետև անձրևից թրջուած հայն իրաւունք չունի պարսից տան ոտքը դնելու ու չինութիւնը պղծելու՞։ Բարեբախտաբար դրացի պարսիկներից մինը նկատելով մեր վիճակը՝ առաջնորդեց դէպի հայոց եկեղեցին. միանգամայն ճանապարհին ներողութիւն խնդրելով, որ անձրևոտ օր լինելով՝ ինքը համարձակութիւն չունեցաւ թուրք դրացիների երկիւղից հիւրասիրել զմեզ։ Հազար շնորհակալութիւն Գ՞թուռցի դաղթական Տէր Վահանին և երէց փոխան Պ. Նահապետին, որոնք ամապարեցին զմեզ հիւրասիրել ու մեր թրջուած շորերը չորացունել իրենց ընտանիքներով միասին. վասն զի մեր ձեռներն այլ ևս չէին զօրեր մի շոր անգամ չորացնելու նոյն աւուր մեր վայելած ցուրտի շնորհիւ։ Հետևեալ օրը գըրէ թէ բոլոր հայերը (թէ կանայք և թէ տղայ մարդիկ) մեզ տեսութեան եկան և իրենց ցաւակցութիւնը յայտնեցին մեր թէ հայրենիքում և թէ ճանապարհներում կրած տառապանքների վրայօք. շատերը հառաչում ու լայ էին լինում մեր աղէկտուր պատմութիւններից։ Բայց նոքա ամենն էլ անցել էին, դեռ նոր ու թարմ էր Սարդարեանների հասուցած հարուածը։ Տեղացիները պատմեցին մեզ որ Սարդարեանքը շատերու հետ այսպէս են վարուել։ Մի շաբաթ Խոյում մնալով բաւական հանգստացանք։ Մոռացայ յայտնելու թէ արդէն մեզանից առաջ հասնողները եկեղեցւոյ խուցերը լեցուել էին. հետևաբար Սարդարեանց դրան վրայ հասնողներս էինք ամբողջապէս վեց հոգի, սրոնց երեքը եկեղեցական էին. մի կին և երկու փոքրիկները։ Երկու օրից վերջ Սարդարենց եղբայրներից մինը որն աւելի խելահաս և ազնիւն էր համարվում. մեզ մօտ գալով ներողութիւն խնդրեց իւր եղբօր մեզ հետ կոպտութեամբ վարուելու մասին. մանաւանդ թէ իւր եղբայրը չէր հասկացեր որ մեզանից երեքը եկեղեցականներ էին եղել. ըստ Թրքական առածին՝ «Էշդիւրի գլուխ գրվասահին մէջ։

Համաժողովին նպատակը թէև համառօտիւ պարզուած է բանաձևին մէջ բայց ժողովը ազատ պիտի ըլլայ բարեփոխումներ կամ յաւելումներ ընել օրակարգին վրայ։ Պատգամաւորական ժողովին գլխաւոր փափաքը եղած է որ ազգին ներկայ ճգնաժամին մէջ առաջարկուած այս գումարու մը իրապէս համաժողով անուան արժանի հանգամանք ունենայ։— Ինչ որ կարելի է միայն կազմակերպեալ մարմիններու և ընդհանուր ժողովուրդին կողմէ ցոյց տրուելիք անկեղծ և գործօն համակրութեամբը։

Այս նպատակին հասնելու համար Պատգամաւորական ժողովը ոչ միայն կը թելադրէ, այլ ջերմապէս կը յանձնարարէ որ ամէն կազմակերպեալ մարմին ներկայացուի համաժողովին մէջ, որոց իւրաքանչիւրին կողմէ նշանակուած Պատուիրակներուն թիւը հինգէն աւելի չըլլայ։ Ցեղոյ ժողովուրդին Ոչ կուսակցական մասը ամէն քաղաքի մէջ մասնաւոր ժողով գումարելով նոյն նպատակին համար ընդրէ Պատուիրակներ որոց թիւը, իւրաքանչիւր քաղաքի համար երեքէն աւելի չըլլայ։

Աւելորդ է ըսել թէ Համաժողովը զուտ Ազգային գումարում մը պիտի ըլլայ, ուստի յարանուանական խտրութիւնները բացարձակապէս ոչ է նշանակութիւն չեն կրնար ունենալ Պատուիրակներու ընտրութեան մէջ։ Կը խնդրուի որ այս մասին եղած բոլոր կարգադրութիւնները որչափ կարելի է փութով հաղորդուին Նահ. Վարչութեանս, որ այս պարագային կը ծառայէ իբր կարգադիր մասնախումբ։ Կարգադրութեանց տեղեկագրութիւնը ինչպէս համաժողովին բացման ժամը պիտի հրատարակուի յարմար ժամանակին տեղական թերթերու միջոցաւ ի գիտութիւն հանրութեան։ Համաժողովը ինք պիտի կազմէ իւ դիւանը, և նիստերը ընդհանրապէս բաց պիտի ըլլան ժողովուրդին, ի բաց առեալ երբ Պատուիրակները որոշեն մասնաւոր նիստեր ունենալ դռնփակ։

Վստահ ըլլալով թէ Ամերիկայի Հայութիւնը գործնականապէս պիտի պատասխանէ սոյն հրաւէրին, որով Հայ Ազգին մէջ ընդհանուր համերաշխութեան դարեշրջան մը պիտի բացուի։

Մնամք Ցարգանօք

Ի Դիմաց Հնչ. Ազգ. Յեղ. Կուսակցութեան Ամերիկայի Մասնաճիւղերու ԺԳ. Պատգ. ժողովին։

ՆՈՒՀԱՆԳԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

3 Սեպտ. 1900

Ց. Գ. Նկատելով թէ երկրին հեռաւոր մասերուն մէջ բնակող գաղութները յատուկ Պատուիրակներ ղրկելու մասին դժուարութիւններ կրնան ունենալ կը թելադրուի որ այդպիսի գաղութներ իրենց փոխանորդ պարուիրակներ նշանակեն յարմարագոյն վայրերէն։

(Նոյն)

Հասցէ 260 Փ. Օ. Պօքս

Լօրէնս Մաս.

Չօր. Օսման փաշան Պոլսէն փախած և Հոկտ. 3 ին Մարսէյլ հասած է։ Օսման փաշայի փախուստին պատճառ տուած է Սուլթանին առած այն կասկածը թէ յիշեալը Սուլթանին կեանքին դէմ նիւթուած դաւադրութեան մը մասնակից եղեր է։ Նա ալ եկած է Մահմուտ փաշային միանալու։

ՉԻՆԱՍՏԱՆ

— Չինաստանի ծանօթ խնդիրներուն վրայ բան մը չգրելն լաւագոյն կը համարենք. զի որոշ ոչինչ կայ գրելիք։ Չինական ներկայ խնդիրներուն մէջ Եւրոպական պետութեանց ըստանձնած դերը յար և նման է ճիշտ այն դիւանագիտական թատերախաղին, որ Հայկական խնդրոյ առթիւ տեղի կունենար Կ. Պոլսոյ մէջ։ Եւրոպական համաձայնութեան անհամաձայն խաղն է որ կը կրկնուի։ Եւրոպական պետութիւններէ ոմանք իրենց զօրքերը Փեքինէ դուրս հանելու քաղաքականութիւն մը գծած են. ուրիշները նորանոր զօրագունդեր կը ղրկեն դէպի հոն։ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը որոշեց ու իր բանակը Փեքինէն մեկնելու հրամանը տուաւ. հոն պահելով միայն պահակագունդ մը։

Մթութիւն, կեղծիք, խաղ. ահա ներկան։ Ապագայի մասին կարծիք յայտնելը մարգարեներու անկ է։

M. HARPOOTLIAN,

P. O. Box 470, Worcester, Mass

ՍԵՂԱՆԱՒՈՐ ՓՈՒՆ. ԳՐՈՑ

Տաճկաստանի բոլոր քաղաքներն դրամ կը փոխադրենք։ Մեր տան կեդրոնատեղիք են Կ. Պոլիս ու Խարբերդ մեծ. Ցարութիւն Ֆ. Խարբութլեան և եղբարք մեծ գումարով փոխ գիր առնողներուն մասնաւոր զեղչ կընենք։ Ամէն գծի վրայ նաւային տոմսակ կուտանք. տոմսակ ու դրամ հեռագրով կը ղրկենք Մարսէյլ։

Մեր խանութին հասցէն է

57 Hanover Street.

Միհրան Խարբութլեան

Ուստր

գապահաթտան պէ•յիւք»։

Ինչո՞ւ համար այսքան սպասելուց յետոյ գրեցի սոյն «Անցելոյն յիշատակութիւններից»։— որովհետև պատեհութիւն ունեցայ այս անգամ ևս— չորս տարուց վերջ— մի և նոյն ճանապարհով գնալ մինչեւ Արազի եզերքը— Նախավերկայ Ս. Ստեփանոսի Վանքն ու հնութիւնները տեսնելու։—

Խոյից պէտք էր հին Ջուղայի ճանապարհով անցնէինք Ռուսաստան։ Փոքր ինչ Աշխարհագրութեան և ազգային պատմութեան ծանօթ եղողները կարող էին զգալ թէ այժմ որպիսի՞ Սրբավայրերում էին գտնվում. կիսակործան ֆամարների իւրաքանչիւր թիւրքարեակ գիւղերում հանդիպելիս՝ վկայում էին թէ քանի՞ բազմաթիւ հայեր բնակել էին այս վայրերում, որոց Ռուս-Պարսկական վերջին պատերազմը (յառաջ քան եօթանասուն ամ) իսպառ բնաջինջ արել էր։ Իւրաքանչիւր պատահած աղբիւրն ու վտակը Ղևոնդեանք ու Վարդանեանք յիշեցնում էին մեզ. եւ մեզանից իւրաքանչիւրը սրտառուչ եղանակներով երգում էին Վարդանանց Շարականներից և երգերից իսկ Քահանաներից մինը իւր չնաչխարհիկ ու զիլ ձայնով Ալիշանի «Պլպուլն Աւարայրի» երգն էր երգում արտասուալից աչքերով, լալիս էր զգացուած քահանան ու լացնում էր ամբողջ ուղեկիցներին։ Հին ու նոր վիշտերն իրար էին խառնուեր. հազար տարուց առաջ Պարսկաչքն հալածանքներուն՝ յաջորդեր էր և Թրքական կոտորածներն ու հալածանքները։

Թդթակից

Շարունակելի

ԱՑԼ ԵՒ ԱՑԼՔ

Միացեալ Նահանգաց Պատմութեան մէջ նմանը չտեսնուած աղէտներ պատահեցան երկու շաբաթ առաջ։ Թեքսաս նահանգի Ծովեզրին մօտերն Կալվեսթն քաղաքը իր շրջակայ քանի մը գիւղերով աւերակ դարձաւ։

Կիկլոն փոթորիկ մը ահռելի ուժգութեամբ ովկիանոսի ջուրերը բարձրացուց քշեց, տարաւ յիշեալ տեղերուն վրայ, ու հոն խորտակուեցան, ինկան, թաղուեցան բոլոր շէնքերը, եւ 5000 է աւելի անձինք մեռան ալիքներու և փլատակներու տակ։

Աղէտը այնքան մեծ էր որ ամբողջ երկիրը թունթ եկաւ, ամէն կողմէն բիւրաւոր ձեռքեր կառկառուեցան այդ տարաբաղդ ժողովուրդին, երկրին ամէն կողմերէն հարիւ հազարաւոր տոլարներ տեղացին հոն, ուտեստ, բժիշկ, հիւանդապահ ու հագուստ ղրկուեցան ճեպընթաց կառքերով։

Շատ հետաքրքրական մի երեւոյթ տեսնուեցաւ այդ արհաւիրքի տարածութեան վրայ, մարդիկ գտնուեցան, գըլխաւորաբար սեւեր՝ որոնք իրենց դաղանական բնաւորութիւնը ի ցոյց դրին, կողոպուտի ելլելով։ Կը կողոպտէին կիսաւէր տունները մեռեալներու դիակները եւ ամէն ինչ բան որ կը գտնէին։ Քաղաքային իշխանութիւնը ստիպուեցաւ այդ ամբարիշտներուն վրայ զորք ղրկել և անոնցմէ շատերը դնդակահար ըսպանուեցան։

Պոսից Շահին անհամար գանձերուն մէջ տուաջին տեղը կը բռնէ Սիրամարգի Գահը, որ աշխարհի ամենաճոխ զարդը կը համարուի։ Ամբողջ արծաթէ շինուած է, իսկ վրայի մասը համակ ձոյլ ոսկի։ Ծայրէ ի ծայր, գագաթէն մինչև յատակը աղամանդներով ընդելուզուած է։ Եւեթ կողմը կայ ականակուռ աստղ մը, որ դիտողին աչքերը կը շըլացընէ- Մեղեսիկ կոչուած թանկագին քարերով շրջապատուած է այն կապերտը՝ որուն վրայ կը հանգչի շահը, ու մարգարիտներով եղերուած է այն բարձը որուն վրայ կը խոնարհի Ն. Վեհափառութեան գլուխը։ Սիրամարգի գահը մասնագէտներու կողմէ 5 միլիոն անգլ. ոսկի կը հաշուի. եթէ այս թիւ չափազանց ալ ըլլայ, չիտակ է որ այդ դումարին կէսէն աւելին կարժէ գահը։

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ
ՏՕՆԱՊԵՏ ՃԵԼԱԼԵԱՆ

38 Նիլանտ փողոց
Պոսթոն

Մենք ալ ժան ճաշ կուտանք, սակայն յաճախորդներ գոհացունելու համար աւելին պէտք է. մաքուր ճաշարան, մաքուր ապրանք, վարպետ խոհարար, համեղ կերակուր։ Մեր ըսածը հաստատելու համար մէկ այցելութիւն մը բաւական է։

ՐԱՖՖԻ

«ԴԱՒԻԹ-ԲԷԿ» Ա. Բ. Գ հատոր վերլաբանով և «ԿԱՑԾԵՐ» Բ. հատոր լիակատար։

Իւրաքանչիւրի բաժանորդագինն է 6 Շիլին։

Լոյս կ'տեսնեն ներկայ 1900 թիւ ընթացքում և անմիջապէս կուղարկուին բաժանորդներին որպէս «ՍԱՄՈՒԷԼԸ» եղաւ։

Ռաֆֆիի միւս երկերը ունենալ ցանկացողները պիտի ուղղակի դիմեն մեզ։

Մեզնից կարելի է ստանալ նաև Խրիմեան Հայրիկի, Մերենցի, Պետրոս Դուրեանի և ուրիշ նշանաւոր գրուածքներ։

Հասցէ.

MME. RAFFI,
47 Uxbridge Road,
London, W., England.

ԸՆԿԵՐ ԿՈՒԶԵՄ

Պոսթոն 1355 Ոչինկթոն Փողոցի վրայ ԼՆԶ-ՐՈՒՄ մը ունիմ. գործս լաւ է բայց մինակ եմ. քիչ մը լեզու գիտցող և քիչ ալ խոհարարութենէ հասկացող ըլլայ։

Մ. Սահակեան

ՄԱՍԻՍ ՆՊԱՐԵՂԵՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Massis Grocery Co.
38 Hudson St., Boston Mass.

Մեր անցեալի փորձառութիւնը եւ թիւրքիոյ հետ ուղղակի առեւտրական ճիւղեր հաստատելը շատերու հետ մըրցելու դիւրութիւն կուտայ մեզ։ Մենք առեւտուրի շատութեան մէջ կը փնտռենք մեր շահը։

Հետեւեալ ապանքներու գները ազայ են մեր խօսածին, Ուստրի պտտուական պլղուր և ծեծած 3 սէնթ փաւունտը կորկոտ 6 ս. պամեա 25 ս. աղցուած կարմիր ոսպ 6 ս. չաղցուած 5 ս. սիսեռ 5 ս. շերբա և մագարոն 5 ս. սալցա մեծ քան 23 փոքր 6½ ս. մուխաշար 3½ ս. սև զէյթին 9-10ս. խաշեր պանիր 32 ս. դահին հալվասի 15 ս. դահին 16 ս. աղը դրած տերև 10. թարմ պանիր, կ. Պոլսէն եկած լօքում նա և տեղական լօքում, թիւրքի այէն եկած պաստրմայ, ֆըսթըխ, չեքեր լեպլեպի, լեպլեպի տեսակներով։ պատէմ չէքերի, Տաճկաստանի մեղր, ուռուպ անուշ կարագ, զէյթուն եաղը (ամենալաւ) պատեղ, ռօճիկ։ Զաման դինձ քիմիոն, կարմիր պիպէռ, հինա, խունկ, խահվէի տէիրմէն, ճաղվաներ։ Թուլուներ, նարկիլներ, մանր աղցուած սուրմ դրի թուղթ, սիկարի թուղթ (Հիւանդանոցի)։ Սեղանի և փիանոի մետաքսեայ ծածկոցներ, ընծայի վերաբերեալ այլ եւ այլ մետաքսեղէնք։ Զանազան տեսակ փարուճներ։ Հոս պատրաստած ամենալաւ պաստրմայ 30 ս. փաւունտը։ 3 տալերէն աւելի ապրանք գնողաց էքսբրէսը մենք կը վճարենք (միայն Պոստոն և շրջակայից համար) իսկ հեռի տեղերու համար 3 ս. զեղչ տալերին մեր առեւտուրը կանխիկ է միշտ. դուրսերը C. O. D. կը ղրկենք. Հալէպի սապոն 5 ս. կտորը Կիրիտի սապոն 7 ս. կտորը։ Մեծ քանակութեամբ գնողաց մասնաւոր զեղչ. օրտըրները շուտով կը ղրկուին ըստ կանոնի

ԿՈՒԶԷՔ ԿԱԼՈՒԱԾ ԳՆԵԼ

Անոնք որ քաղաքին մէջ կամ քաղաքէն դուրս որ և է կալուած գնել կուզեն թող դիմեն հետեւեալ հասցէին միջնորդ արտի և տան վաճառումի։

J. H. DONELLY,
REAL, ESTATE
City and Country Property,
Room 37
476 Main St., Worcester, Mass.

Նմուշի համար հետեւեալ օրինակը կուտանք—

1600 տօլարի, դիւրին պայմաններով Ուստրի մօտերը՝ կալուած մը կը ծախուի որ ունի երկու. երկ յարկանի տուներ, տխոռ մը, մեծ հաւնոց մը, բոլոր շէնքերուն մէջ վազուն ջուր. 16 գլուխ տավար պահելու խոտ, 460 քօտ փայտ, 100000 ոտնաչափ տեղի վրայ ատաղձեղէն և այլն և այլն.

ՀԱՑԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ
(11 Բառլ փողոց Ուստր)

Շաբաթական ոլորտը §1,75 ս. է իւրաքանչիւր ժուռին երեք պնակ կերակուր կը տրուի, մսեղէն, բանջարեղէն և ռաուխլուզ. առաւօտները միայն գաւաթ մը կաթ, իսկ եթէ մէկը պրդոլայ կամ հաւկիթ ուտել ուզէ այն ատեն §2 պիտի վճարէ։ Կիրակի առաւօտները մէկ պնակ միսը պրդոլայ կը տրուի, նաև փելերը կը պատրաստուին 5 տեսակ, միս, պանիր, փայ, մրգեղէն և առատ հացանդուրդներ եթէ ժամանակին կանոնիս համեմատ ճաշի գան §1,50 միայն վճարելու են։ Սենեակ և կամ ամբողջ յարկի տուն ուզողները ինձի դիմելու են։ Այս հրատարակութեանս թող չի ցաւին ճաշարանապետները, քանզի ես իրենց պէս խոհարար կամ դործաւոր չեմ պահեր, բոլոր դործերը ես կընեմ ատոր համար կրնամ վերի դներով պահել ժողովուրդը. ով որ կուզէ համեղ կերակուր ուտել թող մեզի հրամէ։ Նաև ուտելու իւղ կը ծախեմ փաւունտը 6 սէնթ։

Թադէոս Մամիկոնեան

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Տոքթոր Հ. Ս. ՃԷԼԱԼԵԱՆ, կառավարութենէն վկայեալ բժիշկ, իր օֆիսին մէջ կը գտնուի

Կէս օրին 12 է մինչև 1.
Գիշերները 7 է մինչև 9.

Եւ պատրաստ է իրեն դիմող հիւանդ ազգայինները ամենայն խնամօք դարմանել։

Հասցէն է

DR. H. S. JELALIAN,
11 Dartmont St., BOSTON.

ԳՐԱՎԱՃԱՌ ԳՈՐԾԱԿԱԼ

Կուգամ ներողութիւն խնդրել ամէն անոնցմէ որք կամ հարցեր և կամ յանձարարութիւններ ուղղած են մեզ իսկ մենք մեր անձնական դործերու ատեն մը չափազանց խճողեալ ըլլալուն պատճառաւ անոնց պատասխանած չենք։ Այժմ որ դժուարութիւններէ ազատած ու դործերս ըստ ամենայնի կանոնաւորած եմ. ապահովաբար կրնամ ըսել թէ յետ այսու մեքենական կանոնաւորութեամբ իմ դործակալական պարտականութիւններս պիտի կատարեմ։ Կարդ մը գըրեանց յանձնարարութիւնը ուշանալուն մասնաւոր պատճառ եղաւ վենետիկէն ղրկուած սնտուկի մը զարտուղելով՝ ատեն մը կորսուած մնալը։ Կը խնդրենք որ մեզի դիմողները հաճին իրենց հասցէները յստակ ու ուրոշ դրել, երբեմն հասցէներ երբէք չեն կարդացուիր։ Կը կրկնենք թէ մեր Գրավաճառական դործակալութիւնը կը շարունակենք կապ ունենալով թէ թիւրքիոյ թէ Ռուսիոյ և թէ Եւրոպիոյ բոլոր հայ տպարաններու հետ։

Ըստանձնած եմ նաև իրաւունքի գործակալութիւնը. ամէն անոնք որ կը փափաքին կամ հատով և կամ տարեկանով «Իրաւունք» ստանալ, կրնան դիմել ինձի դրամը կրնաք ղրկել Մնի Օրտրով։

Ի. Պետիչեան

Անձնապէս դիմել ուզողները կրնան դալ 99 Կօրհամ Փողոց
Նամակի հասցէն է.

360 P. O. Box,
Lowell, Mass.

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ
ՄԵԾԱԲԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱԲԱՆԱԿ
Ս. ՏԱՄՊՈՒՐԱՃԵԱՆ

Նիւ-Եորք 509 2 րդ. Ավինիւ

Տեղական և Արեւելեան բազմատեսակ նպարեղէններ, լաւագոյն տեսակ ընդեղեններ, եղանակին համեմատ բանջարեղէններ և առօրեայ թարմ միս։ Հայկական պանիր փաւունտը 14 սէնթ, մեծ քանակ գնողաց 13 սէնթ. Ուստրի պտտուական Պղլուր և Ծեծած փաւունտը 4 սէնթի մեծաքանակ գնողաց զեղչ կընենք Զիթապտուղ (զէյթուն) փաւունտը 10 ս. մեծաքանակ գնողաց մասնաւոր զեղչ կընեմ, 5 փաւունտի քէն սալսայ հատը 25 սէնթ մեծաքանակ գնողաց 20 սէնթ հատը։ Մեր քով միշտ պատրաստ կայ Հայկական ամեն տեսակ ապրանքներ, ա՝ ղը դրուած եափրաղ, ընտիր կորկոտ, անթապ հալվասի, կանանչ զէյթուն. Զէյթուն եաղի (ընտիր տեսակէն) մա՝ քառոնի լօքում տեսակներովը, ոսպ աղցուած կամ չաղցուած, սուրմա, սիսեռ Պոլսոյ խաշար պանիր, լէպլէպի շաքարի տեսակներով, քիմիոն, անասոն, պատտուական խունկ. աղւոր ալիւրէ հաց 2 հատը 5 սէնթ, և այլն... Նամակով ե՝ դած յանձնարարութիւնը փութով և քիչ վարձքով կը կատարենք մեր յատուկ կառքով։ Վճարումները կանխիկ են և ոչ ապառիկ։

Նաև կը ծախեմ Պամիեա, Խայսերիի Պաստրմա Սուճուղ և սիկարի թուղթ։

ԱԶԴ

Կը ծանուցանենք Հայ հասարակութեան թէ՝ Պոսթոնի Թայլըր փողոցին մէջ նոր խանութ մը բացած ենք, ուր կը վաճառուին ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԸՆՏԻՐ ՆՊԱՐԵՂԷՆՆԵՐ ՁԱՓԱՒՈՐ ԳՆԵՐՈՎ։

Ցանձնարարութիւնք կը կատարուին փութով և խնամով։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ
ԱՐԱՄ ԱՍՔԱՆԱԶ

Մեր հասցէն է
Tyler Grocery Co.
113 Tyler St. Boston Mass.

ԿԱՐԻՈՐ ԱԶԴ

Ճաշակի յարմար պատուական ապուխտ (Խայսէրի Պաստրմայ) կը պատրաստեմ, գինն է՝ փաւունտը 35 սէնթ. վաճառման կեդրոնատեղին՝

Տ. ՍԷՄԷՐՃԵԱՆ
113 TYLER st BOSTON MASS

231 Իսթ 28 րդ. Փողոց
ՆԻՒ-ԵՈՐՔ

Մ. Գաղանճեան և Պ. Մուշեղեան։

Կը վաճառենք տեղական ու արեւելեան ամէն տեսակ Նպարեղէններ. Հօլսէյլի գնով. դիմեցէք մեզի անձամբ կամ նամակաւ։ Շուտով կը ղրկենք ուր որ ուզուի։

Ահա մեր գներուն ցանկը իւրաքանչիւր փաւունտ սէնթի հաշուով. ձիթապտուղ 9. Ուստրի պուլղուր շատ մաքուր 3½. Հայկական պանիր 10. Լօքում շեքերի 10. Շամ ֆոստիի 26. Պամեայ 28. Ճերմակ ֆասիլեայ 5. Նուշ 18. Զամիչ 8. Սալոր 5. Խայսի 15. Ընկոյզ 14. Ֆեստիկ 13. Խուրմա 5. Լեպլեպու շաքար 20. Հինա 50 Տաճկական սօր 7. Սիսառ 5. Գառին միս տեղս մորթուած 7. Խայսերի պաստրմայ և Սուճուխ 35. Թէ աղի և թէ անկի լեպլեպու 15. Լեպլեպուին ամենալաւը 28. սէնթ ամէն մէկ փաւունտը։ Ունինք նաև Ռիմիոն. Զաման. Տարչին. Լեմոն թուղի և տեղական ապրանաց ամէն տեսակը։

ԱԶԴ
ԸՆՏԻՐ ՊՈՒԼՂՈՒՐ

Ուստրի մէջ երկար տարիներէ ի վեր հաստատած ենք մեր յատուկ պուլղուրի գործարանը։ Սոյն գործին մէջ մեծ փորձառութիւն ունենալով, ամենալաւ ցորենէ կը պատրաստենք ընտիր պուլղուր, որ իր մաքրութեամբ և ուրիշ լաւ յատկութիւններովն՝ տանտիկիններու և ճաշարանապետներու գնահատութեան արժանացած է։ Կը պատրաստենք նաև նոյնպէս ընտիր ծեծած և կորկոտ։

Ուստի ամէն ոք որ կուզէ ընտիր և ախորժահամ կերակուր լինելու պուլղուր և ծեծած ունենալ, թող դիմէ ուղղակի մեզ։ Ապսպրանքներ փութով կը կատարուին. մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել հետեւեալ հասցէին։

Ուստը, Պուլղուրի Միացեալ Ընկ.
151 Իւնիրն սթ., Ուսթը Մասս.

Տաճկական տեսակ տեսակ ապրանքներ ալ կը ծախենք։

Պատիւ ունի ծանուցանել արդ՝ հասարակութեան թէ իւր վաճառած ըմպելիքներն ոչ՝ միայն փորձեալ և անխարդախ են, այլ և դիւրամատչելի են ամէն դասակարդի անձանց.

Այս վաճառատան մէջ կը ծախուին Եւրոպական, տեղական, Քալիֆորնիայի և տամկական ամէն տեսակ սուխքի, օղի, դինի, շամբանիա, մատթիքայ, դարեջուր, պրանտի, ուիսքիի և այլն, իրենց ամեն տեսակներովն։

Փափաքողաց գներու ցուցակը կ՝ ղրկուի առանց ա՝ և է ծախքի։

Ցանձնարարութիւնք կը կատարուին ամենայն ճշդութեամբ եւ փութով։ Քաղաքին մէջ ապրանքներն ձրի կը ղրկուին, իսկ քաղաքէ դուրս ղրկուածներուն ծախքը գնողներուն վրայ է։

Ըմպելիքներ կը վաճառուին թէ՝ մեծ և թէ՝ փոքր քանակութեամբ, իրենց յատուկ գներով։ (Հօլսէյլ անորիթէյլ)

Մեր յաճախորդք երբ չի հաւնին իրենց գնած ըմպելիքներուն, յանձն կառնենք զայնս փոխել, եթէ պակսած ու ճնաասուած չըլլան։

Ըմպելիքներ կը վաճառուին շիշով, կալրնով, տակառով և յատուկ սնտուկներով որք կը պարունակեն 12 կամ 24 շիշեր։

Դիմել յիշեալ հասցէին կամ
Ե. Խ. ԽԷՐՊԷԿԵԱՆ,
535 ՈՒԷՍԹ 57րդ Փողոց, Ն. Ե.